

**«ՌԱՄԿԱԿԱՆ» («ՌԱՄԿՕՐԷՆ») ԼԵԶՎԻ ԸՄՐԻՆՈՒՄԸ  
ՀԱՅ ԼԵԶՎԱՐԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԵՋ**

**Վ. Զ. ՊԵՏՐՈՍԵԱՆ**

Հայ լեզվաբանության պատմության մեջ «ռամկական» կամ «ռամկօրէն» տերմինները ժողովրդախոսակցական լեզվի նշանակութեամբ առաջինը կիրառել են Մխիթարյանները: Իհարկե, այդ տերմինները գործածող լեզվաբաններից յուրաքանչյուրն ընդլայնում կամ նեղացնում է նրա ընդգրկման դաշտը, ներմուծում իմաստային և ոճական նրբերանգներ:

«Ռամկական»-ը խոսակցական լեզվի նշանակութեամբ գործածող առաջին հեղինակը Մ. Սեբաստացին է, որը թեև խոսակցական լեզվի համար գործածում է նաև աշխարհաբար տերմինը, բայց ռամկական և աշխարհաբար տերմինները լիովին չի նույնացնում: Նա ռամկական է անվանում հասարակ ժողովրդի գործածած խոսակցական հայերենը, առանց նույնացնելու գավառական լեզվի հետ: Սեբաստացու հայացքներում գավառականը հարաբերում է ռամկականին, որպես մասնավորն՝ ընդհանուրին: Նա ռամկական լեզվի առաջացումը բացատրում է դարերի ընթացքում գրաբարի կրած աստիճանական բազմազան ձևափոխություններով: Այդ հարցում դեր են խաղացել և՛ ժողովրդի տարբեր կողմեր տարածվելը («ընդ վտարիլ կողմանց»), և՛ ազգերի խառնվելը («ընդ խառնակիլ ազգաց»): «Ընդարոյս բարբառը» (իմա՝ հին հայերենը— Վ. Պ.) քիչ-քիչ փոփոխվում է «ըստ տառի, ըստ վանկի, ըստ բառի, ըստ հոլովման և ըստ այլոց հանդամանաց լեզուի»: Լեզվագործածության ընթացքում ժողովրդի կողմից ստեղծված են «անհամար» գավառական բառեր, լեզվի մեջ են ներթափանցում բազմաթիվ օտար բառեր «և ել բարբառս այս ռամկական, որ կոչի աշխարհաբառ լեզու»<sup>1</sup>:

Այս բացատրության մեջ ռամկական և աշխարհաբար տերմինները գործածվում են միևնույն նշանակութեամբ, բայց պիտի ուշադրություն դարձնել այդ նույնացման հանդեպ հեղինակի վերաբերմունքին՝ «որ կոչի աշխարհաբար լեզու»: Այսինքն՝ ռամկականը աշխարհաբարի հետ նույնացնողը Սեբաստացին չէ:

«Բառգրքի» առաջին հատորում տեղ գտած օտար, մասնավորապես՝ «տաճկական» բառերի առիթով հեղինակը գրում է. «Այլ կոչեցաք զսոսա ռամկականս, և ոչ թէ զայլազգականն հայերէն կարծելով, այլ զի սովորութիւն է ռամկաց ի խօսիլն հայերէն՝ խառնել զայսպիսի բառս, և վարիլ նոքօք իբր հայկական բառիք, և յայս միտս ոչ անուանեցաք զնոսա աշխարհաբառս, այլ ռամկականս»<sup>2</sup>: Որպես այդպիսիք նշում է յօտարեայլ. չէքն. լէքն, հիսէ, այլախնի թուրքերեն բառերը: Հետևաբար, ըստ Սեբաստացու.

<sup>1</sup> Մ. Սեբաստացի, Բառագիրք հայկազեան լեզուի, Թ. 1, Վեներտիկ, 1740. Էջ 12ա:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 10ա:

նամկականը օտար բառերով ներթափանցված ժողովրդախոսակցական լեզուն է: Ընդ որում, ենթադրելի է, որ այդ օտար բառերն այն աստիճան էին միահյուսվել խոսակցական լեզվին, որ հաճախ դժվար էր դրանք քնիկ բաներից տարբերակելը: Բնական է, որ այդ դեպքում հեղինակը պիտի բացատրեր նաև աշխարհաբար տերմինի իմաստը, որը, տրամաբանական է, պիտի սահմանվեր իբրև օտարաբանություններից զերծ ժողովրդախոսակցական հայերեն, սակայն նա չի փորձում դա անել, ոչովհետև իրականում օտարաբանություններից զերծ խոսակցական հայերեն դեռևս գոյություն չունի:

Բառաձևերի առիթով Սեբաստացին, ըստ էության, ռամկականի նշանակությունամբ է գործածում գոնեկական անվանումը: Անդրադառնալով ոճական արժեք ունեցող քերականական ձևերին՝ հեղինակը նկատում է. «... Իսկ ընտիր՝ յօհաննէս, յօհաննու, և գոեհկական յօհաննէսի, կամ նիսի: Զնոյն գտցես և ի լծորդութիւնս բայից. քանզի ընտիր է բեկանել և հասարակ բեկել. ընտիր է լուաց և անսովորական՝ լսեցի»<sup>3</sup>: Ուշագրավ է, որ լսեցի ձևը լեզվաբանն անվանում է ոչ թե «հասարակ», այլ՝ «անսովորական»<sup>4</sup>, այսինքն՝ հին հայերենում սակավ հանդիպող բառաձև: Իրոք, դա լսել բայի աշխարհաբարյան խոնարհման ձևերից է: Սեբաստացին այս դեպքում ևս բավարարվում է տրված բացատրությամբ: Հաջորդներից հատկապես Ա. Այտընյանն այդպիսի օրինակների քննությամբ հարստացնում է ռամկական լեզվի ըմբռնումն՝ այն վերածելով ամբողջական տեսության:

Այտընյանի «Քննական քերականութեան» մեջ միևնույն նշանակությամբ հանդիպում են ռամկական և ռամկորեն տարբերակները: Ի տարբերություն Սեբաստացու, որը ռամկական տերմինով հիմնականում նկատի ունի միջին հայերենին հաջորդող նոր լեզվաորակը՝ 17—18-րդ դարերի խոսակցական հայերենը, Այտընյանը ռամկականին ավելի տևական ժամանակամիջոց է հատկացնում՝ նրա սկիզբը ցույց տալով դեռևս 4-րդ դարում: Ռամկորենի այտընյանական ըմբռնումը պայմանավորված է, առհասարակ, լեզվի, որպես զարգացող և փոփոխվող երևույթի նկատմամբ, նրա բնաշրջական հայացքով: Ըստ Այտընյանի՝ լեզվի կյանքը նման է մարդկային կյանքին, առհասարակ, բնական օրգանիզմների կյանքին: Այսինքն՝ վերջիններիս նման լեզվին ևս բնորոշ են ծնունդը, ապրելը, նորին կյանք տալը և մահը: Բայց, ի տարբերություն բնական օրգանիզմների, լեզուն հասարակական երեվույթ է և, որպես այդպիսին, ունի իր առանձնահատկությունները: Այսպես, եթե որոշակի է մարդու ծննդյան ժամանակը, ապա լեզվի համար այդպիսի որոշակի ժամանակ նշել հնարավոր չէ, այլ կարելի է նշել միայն մոտավոր ժամանակամիջոց: Բանն այն է, որ ինչպես լեզվական մի որակի մահն է տեղի ունենում տևական ժամանակամիջոցում և վերջին հաշվով՝ այն լիովին չի մահանում, այլ նրա որոշ կենսունակ տարրեր շարունակում են ապրել նոր լեզվում, այդպես էլ՝ նոր լեզվի սաղմերը, որպես կանոնական ձևերից շեղումներ, բացառություններ կամ ոճական տարբերակներ, նկատելի են հնի ընդերքում: Հետագա լեզվական հոլովույթի ընթացքում գործածական նեղ ոլորտ ունեցող ձևերը աստիճանաբար բացառություններից անցնում են կանոնականի կարգը և ընդհակառակը, երբեմնի կանոնական համարվողները անցնում են ջեզումների կարգը՝ կամ պահպանվելով որպես այդպիսին, կամ էլ՝ ընդհանրապես դուրս գալով գործածությունից: Ըստ Այտընյանի՝ դա է պատճառը, որ կարելի է ձանաչել նոր լեզվաորակի մոտավոր

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 19ա:

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 19ա:

սկիզբ (դա այն շրջանն է, սովորաբար՝ դարը, երբ նոր լեզվին բնորոշ քերականական ձևերն ու արտահայտութունները գերակշիռ են դառնում հնի համապատասխան ձևերի ու արտահայտութունների նկատմամբ), բայց հնարավոր չէ մատնանշել լեզվի ծննդյան որոշակի պահ:

Ելնելով այդ ըմբռնումից՝ լեզվաբանը ռամկական լեզվի սկզբնավորումը հասցնում է վաղ միջնադար, 4—5-րդ դարեր: Այս շրջանի խոսակցական լեզուն անվանելով հին ռամկական՝ վերջինիս առաջին տարրերը հեղինակը մատնացույց է անում Փ. Բուզանդի և Ղ. Փարպեցու «Պատմութուն»-ներում:

Ճանաչելով «Աւագանւոյ կամ Ազատաց լեզու, Ուսումնական կամ Գիտնոց լեզու, Հասարակ կամ Ընտանեկան լեզու, Գոեհիկ կամ Գեղջկաց լեզու» և այլն, որոնք, ըստ էության, միևնույն լեզվի հասարակական տարբերակներն են, Այտընյանը 5-րդ դարում, գրական լեզվից բացի, առանձնացնում է նաև «ընտանեկան կամ ռամկական հայերէն», որը գրաբարից տարբեր զարգացման ընթացք է ունեցել: Ըստ նրա՝ «նաև ոսկեդէն դարուն մէջ՝ ուսմիկն իւր բաժինն միայն գիտէր, սյսինքն իւր գաւառինն ու իւր ժամանակուանը»<sup>5</sup>: Նրա կարծիքով արքունիքում կամ նախարարական «սէզ» ամբողջներում խոսվող լեզուն չէր կարող նույնը լինել «հանդարտիկ խաղաղասէր ընտանեաց խոնարհ երգերուն տակ»<sup>6</sup> խոսվող լեզվի հետ: Ռամկորենի երկու կարևորագույն հատկանիշներ համարելով պարզաւթյունը և բացահայտութունը՝ Այտընյանն այդ երկու հատկանիշներին փոխադարձ կապ է վերագրում և ոչ մեկը մյուսի նկատմամբ առաջնային չի համարում: «Ռամիկը որուն աւելորդ է քերականական պերճութիւն, հին գրաւոր ձևաշատութիւնէ կը խորշի և կը սեպհականէ իրեն պարզ ու միակերպ ձևերը»<sup>7</sup>: Ըստ այդմ էլ՝ Այտընյանի կարծիքով «... հին ընտանեկան կամ ռամկական հայերէնէն սպասուելու յատկութիւններն անոնք են», որոնք պահանջում է խոսողութան բնական ընթացքը: Որպես այդպիսիք՝ նշում է, որ՝ 1) ոչ և չժխտականներից առաջինը հատուկ է գրաբարին, իսկ երկրորդը՝ ռամկորենին, թեպետ քիչ չի գործածվել նաև գրաբարյան «զարդարուն ոճոյն մէջ»<sup>8</sup>. 2) զի շաղկապի փոխարեն ու-ի գործածութիւնը աշխարհաբարին բնորոշ երևույթ է<sup>9</sup>. 3) քէ-ն «միջին ռամկորէնի գրեթէ միակ թէական շաղկապն» է, իսկ «նոր ռամկորէնի մէջ միայն քէ մնացած է՝ որևիցէ նշանակութեամբ ու գործածութեամբ և եթէ անհետ եղած է»<sup>10</sup>. 3) ի տարբերութիւն գրաբարի հոլովման ձևաշատության, ռամկորենը այդ համակարգում ևս պարզեցման միտում է դրսևորում՝ ի վերջո հանգեցնելով երկու ձևի, այն է՝ «սեռական ի. բացառական է. գործիական ով եւ կամ սեռական ու. բացառական է. գործիական ով»<sup>11</sup>. 4) հոգնակի թվում ռամկականը վերջնական պարզեցման է հասցնում հոլովման համակարգը՝ եր, երու-երով. համապատասխանությամբ<sup>12</sup>. 5) «... ուր որ հին լեզունէն յետագաս նախադրութիւն մը գտած է ռամկորէնը, թէպէտ սովորական թէպէտ անսովոր, անիկա իրեն պահած կամ սեպհականած է՝ գրեթէ միակերպ խնդրառութեամբ»<sup>13</sup> ևն:

<sup>5</sup> Ա. Այտընյան, Քննական քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզվի, Երևան, 1987, էջ 37:

<sup>6</sup> Տե՛ս նույն տեղը:

<sup>7</sup> Նույն տեղում, էջ 47—48:

<sup>8</sup> Նույն տեղում, էջ 67:

<sup>9</sup> Նույն տեղում:

<sup>10</sup> Տե՛ս նույն տեղը:

<sup>11</sup> Նույն տեղում, էջ 68:

<sup>12</sup> Նույն տեղում, էջ 76:

<sup>13</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 78—79:

<sup>14</sup> Նույն տեղում, էջ 88:

Միաժամանակ լեզվաբանը նկատում է, որ «հին ընտանեկան հայերէնի ընթացքին զբարարի ընթացքէն տարբերութիւնը այնպիսի որոշմանց կարգն է, որոնք աւելի դիւրին է զգալ քան թէ մատամբ ցուցնել»<sup>15</sup>:

Նշելով գրաբարի նկատմամբ աշխարհաբարի ունեցած տարբերութիւնները, Այտընյանը նկատում է, որ դրանք «հազիւ երակներն են բուն հին աշխարհաբարինը՝ որուն մարմինը խորագոյն թաղուած է մատենագրութեան գետնին տակ»: Թեպետ «աշխարհաբար կամ ժողովրդական ստորին լեզուի մը գոյութիւնը այլ ոչ ծագումը» հեղինակը մատնացուց է անում դեռ 4—5-րդ դարերի մատենագրութեան լեզվում, բայց և այնպես հին գրական հայերենի և «հին աշխարհաբարի մը» միջև սահմանագլուխ է համարում 7-րդ դարը, երբ «լեզուն կրելու այլայլութիւնները յառաջացած, ոամիկ բարբառ մը արդէն զօրացած և ըստ բաւականին իւր կերպարանքն առած էր, որով և նորը հինէն որոշուած բաւական անջրպետով»<sup>16</sup>: Այդ շրջանի աշխարհաբար լեզվին հեղինակը «նախնեաց ոամկօրէն» անվանումն է տալիս, որն, ըստ էութեան, վերաբերում է մինչև 11-րդ դարի խոսակցական լեզվին, որից հետո մինչև 15-րդ դարի խոսակցական լեզուն նա կոչում է «ստորին դարուց ոամկօրէն»՝ հայոց լեզվի պատմութեան իր կատարած շրջանաբաժանմանը համապատասխան:

Նախնայաց ոամկօրենին բնորոշ է համարում՝ ա) նոր բառերի առկայութիւնը (հալաւ—զգեստ, շէր՝ անել— երգ, պապ—հաւ, մամ—հանի, սապաւն—օճառ ևն). բ) «յետնագոյն ոամկօրէնին յատուկ նշանակութիւնների» սովորական դառնալը, որոնք սակավադեպ էին հնների մոտ, կամ էլ «նոր նշանակութիւնների» երևան գալը, «որոնց մէջ նշանաւոր է այլ յետագաս շաղկապն» («Դուք գտածարն այլ յայրել էք իտալ») և խիստ մակբայը («Խըսիտ վաստակեցաւ Սմբատ»): գ) բառերի սղման և հնչյունափոխութեան հաճախակիացումը (ի ներս—ի ներքս, սեւ—սեաւ, տաղ՝ տառափ—տեղաւարափ, Շառախ—Շատխոյ ևն). դ) անվան և հատկապես դերանունների «ոամկական հոլովմունքը» (տեղաց—տեղեաց, տեղօ՛—տեղեօք, որդեօ՛ւ—որդուօք, ի մեզանէն—ի մէնջ, այսոց—սոցա, այսոցիկ ևն). ե) բայերի նոր ձևերը, «իրարու փոխանակութիւնք, տարբեր կամ պարզած խոնարհմունք», մասնավորապես ոամկօրենին հատուկ «բաղադրեալ ժամանակի» երևան գալը («Ի նոյն վանսն էր գրած—գրուած էր»). Յ) նախդիրների և ուրիշ անփոփոխ խոսքի մասերի կիրառութեան, ձևի և նշանակութեան փոփոխութիւններ ևն:

Ըստ Այտընյանի, 8—13-րդ դարերում գրական լեզուն «իւրօք գրաբար էր, այսինքն գրոց և գրագիտաց սեպհական մնացած լեզու»<sup>17</sup>: Նրա կարծիքով 13-րդ դարից հետո «Պարզ գրութիւնք ըսելով ցամաքն ու անշուք ոամկականն իմանալու է, իսկ Զարդարուն՝ անբնական ճամարտակութեանց կոչտ մը»<sup>18</sup>: Գրում է, որ նախնայաց ոամկօրենի հետ բավականաչափ ընդհանրութիւններ ունեն «անցեալ դարերէն մնացած լեհացի հայոց գրութիւններն»<sup>19</sup>, իսկ առաջին գաղառնականն իր հիմնական գծերով «աւելի նույնութիւնն է նախնեաց ոամկօրէնին՝ քան թէ փոփոխութեանց շարունակութիւնն»<sup>20</sup>:

Զնայած որ «յետին դարերի կամ նոր ժամանակների» (16-րդ դարից այս կողմ ընկած ժամանակամիջոցը) աշխարհաբարում լեզվաբանը շոքս

<sup>15</sup> Նույն տեղում, էջ 118:

<sup>16</sup> Նույն տեղում, էջ 122—123:

<sup>17</sup> Նույն տեղում, էջ 133:

<sup>18</sup> Նույն տեղում, էջ 134:

<sup>19</sup> Նույն տեղում, էջ 163:

<sup>20</sup> Նույն տեղում, էջ 170:

գավառական լեզու է տարբերակում, սակայն դա չի խանգարում, որ այդ ժամանակահատվածի համար ճանաչի նաև ընդհանուր ռավկորեն: Այդ առիթով նկատում է, որ ի տարբերություն հին ժամանակների, երբ լեզուն իր բնականոն զարգացման ընթացքի մեջ էր և «օտարութեանց շափն էր՝ Զափաւորութիւն, վերջին ժամանակներում շափն եղած է՝ Անշափութիւն»<sup>21</sup>:

Ռամկորենի ուսումնասիրությանը առանձին կարևորություն է տվել Վիեննայի միաբանության մյուս միտիթարյանը՝ Ղևոնդ Հովնանյանը: Վերջինս ճատուկ զբաղվել է նախնայաց ռավկորենի (իմա՝ միջին հայերենի) քերականական, լեզվաոճական և տաղաչափական հարցերի քննությամբ<sup>22</sup>:

Ռամկական լեզվի ըմբռնման հարցերում հիմնականում լինելով Ա. Այտրնյանի հետևորդը, Ղ. Հովնանյանն էականորեն առաջ է մղում այդ լեզվի ուսումնասիրության գործը՝ քննության նյութ դարձնելով միջին հայերենը, որն, ըստ հեղինակի, թեպետ իրենից առաջ էլ հետաքրքրել է ուսումնասիրողներին, սակայն բավարար ուշադրության չի արժանացել: Վերջին իրողությունը Հովնանյանը բացատրում է նրանով, որ «գրասական հնութեան սիրողը կ'արհամարհին յամենայնի զմիջնադարեան... կ'արհամարհեն նոյնպէս նորութեանց սիրահարեալք, որովհետև տարբեր է իրենց վարժածէն և հաճոյականէն»<sup>23</sup>: Այդ առիթով ուսումնասիրողը նախնայաց ռավկորենի դերը, մասնավորապես, կարևորում է նրանով, որ այն կապող օղակ է գրաբարի և արդի լեզվի միջև: Նրա միջոցով հնարավոր է դառնում «իմանալ այնչափ բառերու և ձևերու ծագումն, որ օտար կամ օտարացած են գրաբարէն և այնպէս սովորական արդի լեզուին»<sup>24</sup>:

Հովնանյանը մերժում է նախնայաց ռամկորենը ուղղակիորեն գրաբարից բխեցնելու տեսակետը՝ իբրև «յընթացս դարուց ի բերան ժողովրդեան ապականելով»: Ըստ նրա՝ «նախնայաց ռավկորենն... ետանուրդ է ժամանակակից գավառական բարբառոց և գրաւոր լեզուի»<sup>25</sup>, ի տարբերություն Ա. Այտրնյանի, որ ռամկորեն լեզվին, առհասարակ, գրական լեզվից առանձին զարգացում էր վերագրում՝ նրա ակունքները մատնանշելով դեռևս 4—5-րդ դարերի հայերենում: Ըմբռնման այդ տարբերությունները հավանաբար պայմանավորված են ուսումնասիրության առարկայով. ի տարբերություն Այտրնյանի, որը մատենագրության միջոցով փորձում է վեր հանել խոսակցական լեզվի առանձնահատկությունները՝ սկսած գրականության սկզբնավորման ժամանակից, Հովնանյանի նպատակն է՝ ուսումնասիրել նախնայաց ռավկորենով ստեղծված մատենագրությունը, հետևաբար՝ նախնայաց ռամկորենի լեզվական առանձնահատկությունները ցույց տալ մատենագրական քննության շրջանակներում: Այսինքն՝ Հովնանյանի ուսումնասիրության առարկան, ի դեմս միջին դարերի մատենագրության, գրական լեզվի աստիճանի բարձրացված խոսակցական լեզուն է, այլ կերպ՝ միջին գրական հայերենը և ոչ թե՛ զուտ ժողովրդախոսակցական, գրական նվազագույն մըշակման իսկ շենթարկված լեզուն: Այդ են վկայում նաև հետևյալ տողերը.

<sup>21</sup> Նույն տեղում, էջ 231:

<sup>22</sup> Առաջին երկու հարցերը նա քննում է «Հետազոտութիւնք նախնայաց ռավկորենի վրայ» (Վիեննա, 1897) աշխատության առաջին մասի երկու գրքուկներում, իսկ երրորդը՝ «Միջնադարեան ազգային տաղաչափութիւն ռավկայտուն» (Վիեննա, 1911) աշխատության մեջ: Մեզ հետաքրքրող խնդրի համար առանձին կարևորություն ունի առաջին աշխատության Ա գրքուկին կցված «նախաշառիղը»:

<sup>23</sup> Ղ. Հովնանյան, Հետազոտութիւնք նախնայաց ռավկորենի վրայ, առաջին մաս, Ա տետր, Վիեննա, 1897, էջ 2:

<sup>24</sup> Նույն տեղում, էջ 2—է:

<sup>25</sup> Նույն տեղում, նախաշառիղ, էջ 10:

«Հայերէն գրութիւնք լեզուի նկատմամբ՝ երեք այլևայլ կերպարանօք կ'ըլլեն մեր առջև, որ են՝ Գրաբարն, Նախնեաց ուսմկօրէնն, և այժմու Գաւառականք՝ յորոց երկուքն միայն գրաւոր են, այն է տաճկահայոցս (արևմտեան) և ռուսահայոց (արևելեան) բարբառք»<sup>26</sup>, ուր հստակորեն նախնայաց ուսմկորենը գործածված է միջին գրական հայերէնի նշանակութեամբ և ոչ թե՛ ընդհանրապես միջին հայերէնի:

Հովնանյանը ևս 7-րդ դարը սահմանագիծ է համարում գրաբարի և ուսմկորենի միջև. «... Բուն ուսմկօրէնի կամ այլ գաւառականաց հետքերը՝ քանի հեռանանք Ծ դարէն՝ նոյնչափ յաճախ կը գտնենք ի գիրս, որ Ծ դարէն սկսեալ ուրէք ուրէք անոնց բառերն ու ասացուածները կը հանեն մեր առջև»<sup>27</sup>: Հատկապես 7-րդ դարից հետո ուսմկօրենով կամ ուսմկորենի տարբերի պարունակութեամբ ստեղծված մատենագրութեան մեջ նա տարբերակում է երկու որակ. 1) ռամկադէն, ռամկազի կամ ռամկախոս գրվածքներ, որոնցում անխտիր գործածվել են ուսմկորենին բնորոշ բառերը, մասնիկները. «սղմունքն, ամփոփմունքը» ձևերը, դարձվածները, կազմակերպութունները, որոնցից երևում է, որ հեղինակը փորձել է ուսմկորեն գրել, թեև հաճախ գործածել է նաև գրաբարյան ձևեր. 2) ռամկախառն գրվածքներ, որոնք ամբողջութեամբ գրված են գրաբարով և միայն առանձին ձևեր, «երբեմն նաև ուսմկական դարձուածներ խառնուած են»: Թերևս հենց այդ բաժանումն էլ հեղինակին հիմք է տալիս ասելու, որ «նախորդաց ռամկախառն գրաբարին դիմաց՝ յաջորդք հնարեցին գրաբարախառն ուսմկօրէն»<sup>28</sup>:

Ղ. Հովնանյանի սույն բաժանումը արժեքավոր է ոչ միայն նրանով, որ միջնադարի հայ մատենագրութունը լեզվաոճական դասակարգման ենթարկելու առաջին փորձերից է, այլև նրանով, որ միջինհայերենյան շրջանի համար թերևս հենց առաջին փորձն է:

Հեղինակը միևնույն նշանակութեամբ գործածելով ժողովրդական և ռամկակաճ անվանումները, միաժամանակ, բաղձալի համարելով «գրուած ունենալ այն լեզուն, որ հասարակ և սովորական էր ժողովրդեան ամեն դասուց մէջ», նաև փորձում է հասկանալ այդ լեզվով առաջինը գրողների հոգեբանութունը, որոնք «թերևս ուսմկօրէն գրոց, օգուտն ու կարևորութիւնը տեսնելով՝ անձամբ ի նոյն ձեռնարկելու խորհուրդն» ունենալով, «յետոյ կատէին՝ իրենց ամօթ ու նախտինք համարելով այնպիսի բարբառ գործածել գրուածոց մէջ, որ ըստ գաղափարի ժամանակին՝ բուն գեղջկաց կամ զոնկկաց սեպհական էր»: Քանզի նրանք «թերևս այնպէս կարծէին թէ ուսմկօրէն գրել՝ լճելեայն խոստովանութիւն է գրաբար գրելու անկարողութեան»<sup>29</sup>:

Բուն ուսմկական մատենագրութեան սկիզբը դնելով 12-րդ դարում, նա գրում է, որ այդ ժամանակաշրջանում արքունիքի (քնական է, նկատի ունի Կիլիկիայն թագավորութունը) «պաշտօնական լեզուն էր նոյն ուսմկական բարբառն»<sup>30</sup>:

Այսպիսով. 1) ռամկակաճ կամ ռամկադէն անվանումներով երեք հեղինակներն էլ բնորոշել են ժողովրդախոսակցական լեզուն, բայց հեղինակներից յուրաքանչյուրը, երևույթի ընդհանուր ընկալման շրջանակներում, ունի ինքնատիպ ըմբռնում: Այսպես՝ ա) ըստ Սեբաստացու, ռամկական լե-

<sup>26</sup> Նույն տեղում, Յառաջաբան, էջ Ծ:

<sup>27</sup> Նույն տեղում, Նախաշարի, էջ 12:

<sup>28</sup> Նույն տեղում, էջ 21:

<sup>29</sup> Նույն տեղում, էջ 37:

<sup>30</sup> Նույն տեղում, էջ 45:

գրվե օտար տարրեր ունեցող աշխարհաբարն է, այսինքն՝ խոսակցական լեզուն, ընդ որում՝ նա այդ տերմինով առավելագույն հասկանում է իր ժամանակի խոսակցական հայերենը. բ) Այտրնյանը ռամկական կամ ռամկոտե անուններով բնորոշում է, առհասարակ, խոսակցական լեզուն՝ սկզբնապես նախնական ժամանակներից և առանձին կարևորություն չի տալիս օտարաբանության խնդրին. գ) Հովնանյանը թեպետ նույնացնում է ռամկական և ժողովրդական անվանումները, սակայն նախնյաց ռամկոտեներ գործածում է առավելագույն միջին գրական հայերենի նշանակությամբ: 2) Ի տարբերություն Մ. Սերաստացու, որը բավարարվում է միայն ռամկական լեզվաչեղրի տարբերակմամբ, Ա. Այտրնյանը մշակում է ռամկականի, թեպետև՝ ընդհանուր, բայց ամբողջական տեսությունը, նրա զարգացումը դիտելով որպես լեզվական բարեշրջությունների անվերջ շղթա, իսկ Ղ. Հովնանյանը մասնավոր ուշադրություն է դարձնում ռամկոտեների մեկ ողակին՝ նախնյաց ռամկոտեին. «Հետազոտութիւնքի» երկրորդ մասով հեղինակը ծրագրում է գրել նախնյաց ռամկոտեների ամբողջական և հանգամանալից բերականությունը, բայց վաղաժամ մահը անավարտ է թողնում այդ կարևոր նախաձեռնությունը<sup>31</sup>: 3) Եթե ռամկական լեզվաչեղրի տարբերակմամբ Մ. Սերաստացին առաջադրում է լեզվի հասարակականորեն շերտավորված լինելու կարևոր գաղափարը, ապա Այտրնյանն ու Հովնանյանը գործնականորեն հիմնավորում են այդ գաղափարի ճշմարտացիությունը, այդպիսով նրան կյանքի իրավունք տալով հայ լեզվաբանության պատմության մեջ:

**В. З. ПЕТРОСЯН.— Восприятие просторечия в истории армянского языкознания.**— Термин просторечие впервые в истории армянского языкознания употребил в значении «разговорный армянский язык» литературный и культурный деятель 18-го века Мхитар Себастиани. Просторечием, в частности, он называл разговорный армянский язык, пронизанный чужими элементами. Во второй половине 19-го века Арсен Айтнян разработал обобщенную теорию просторечия, особо выделив периоды древнего просторечия, просторечия предков и общего просторечия. Кроме просторечного языка Себастиани и Айтнян принимают также существование провинциального языка. Исследованием просторечия предков занимался, в частности, и Гевонд Овнанян. Этот просторечный язык он отождествлял со средневековым литературным армянским языком, в то время как, согласно Айтняну, просторечие предков — это литературно необработанный средневековый армянский язык.

<sup>31</sup> Տե՛ս նույն տեղը, Բ տեսոր, էջ է—Ը: